«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Կերպարվեստ» խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը
6. Խմբակում ընդգրված են [illegible],5, դասարանի աշակերտները:
7. Գնահատումը կատարվում է գնահատման չափորոշիչներին համապատասխան:

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների,կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

## «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ » ԱՌԱՐԿԱ ԾՐԱԳԻՐ (շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ)

| |
|---|
| Գունանկար ( 7 ժամ ) |
| Նպատակը |
| Կզարգանա պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի հեռանկարչական կրճատումների, լույսի և ստվերի, երանգների ինքնուրույն ընտրության և պատկերման կարողությունների զարգացում: |
| Խնդիրներ |
| Ընկալել պատկերվող օբյեկների ձևը, կառուցվածքը, ծավալը, գույնը, ֆակտուրան, լուսաստվերը, տարածական դիրքը և փոխհարաբերությունները և հեռանկարչության կիրառումը: |
| Վերջնարդյունքներ |
| Կկարողանա տիրապետել առարկայի ճիշտ կառուցումը և համաչափությունների կիրառումը, նաև տիրապետել գունային խառնուրդներին և նյութի օգտագործմանը: |
| Բովանդակություն |
| 1. Գունանկար:( 2 ժամ )<br>2. Գծանկար:( 2 ժամ )<br>3. Նատյուրմորտ:( 2 ժամ )<br>4. Թեմատիկ նկարչություն: ( 3 ժամ ) |

| Կոմպոզիցիա ( 6 ժամ) |
|---|
| Նպատակը |
| Կոմպոզիցիայի հիմնական միջոցների և հնարքների, գեղարվեստական ոճաձևերի ստեղծագործաբար կիրառում, կոմպոզիցիայի բոլոր տարրերի համաձայնեցվածություն, կոմպոզիցիան կենտրոնի շեշտադրում: |
| Խնդիրներ |
| « Կոմպոզիցիա » հասկացության լայն ըմբռնում որպես ստեղծագործության թեմայի գեղարվեստական նյութի ձևի և կատարման տեխնիկական հնարքների ամբողջություն: |
| Վերջնարդյունքներ |
| Կտարբերի նյութերի մշակելու և դրանցով աշխատելու հնարքներին, և պատկերման տարբեր տեխնիկաների ճիշտ կիրառումը սեփական աշխատանքում: |
| Բովանդակություն |
| 1. Դիմանակր:( 2 ժամ )<br>2. Շենքեր և շինություններ: ( 2 ժամ )<br>3. Դեկորատիվ նկարչություն: (2 ժամ) |

| Պլեներ(Էտյուդ) ( 6 ժամ ) |
|---|
| Նպատակը |
| Բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում: Տրամադրություն և իրավիճակի արտահայտում գույնի, երանգի, ռիթմի և ձևի հատկությունների օգնությամբ: |
| Խնդիրներ |
| Պտկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, հեռանկարչկան կրչատումների, լուսաստվերի, երանգների ինքնուրույն վերլուծման և պետկերման կարեղություննների զարգացում : |
| Վերջնարդյունքներ |
| Կկարողանա պատկերել բնանկարների ավարտուն տեսարան կարճ ժամանակահատվածում : |
| Բովանդակություն |
| 1. Բնության տեսարաններ: (2 ժամ)<br>2. Քաղաքային և գյուղական տեսարաններ: (2 ժամ)<br>3. Էտյուդներ (պլեներ): (2 ժամ) |

| Զարդանկար ( 4 ժամ ) |
| --- |
| Նպատակը |
| Սովորողները կծանոթանան զարդանախշի ծագման և հետագա զարգացման պատմությանը, զարդանախշի բազմաթիվ տեսակներին և դրանց օգտագործմանը տարբեր ազգերի կերպարվեստում և ճարտարապետության մեջ : |
| Խնդիրներ |
| Կծանոթացնա նկարազարդման և պատկերազարդման առանձնահատկություններին: |
| Վերջնարդյունքներ |
| Կիմանա այլ նյութերի և տեխնիկական միջոցների մասին, որոնք օգտագործվում են նկարազարդումների ժամանակ: |
| Բովանդակություն |
| 1. Կենաց ծառ: (1 ժամ)<br>2. Զարդանախշերի տեսակներ ( կենդանական, բուսական և երկրաչափական ձևերը): (1 ժամ)<br>3. Զարդանախշերի օգնությամբ ձևավորել հեքիաթի գրքերը: (2 ժամ) |

| Մանրանկարչություն ( 3 ժամ ) |
| --- |
| Նպատակը |
| Սովորողներին ծանոթացնել մանրանկարչության ծագմանը և զարգացմանը: Հայտնի մանրանկարիչների աշխատանքների արտանկարում: |
| Խնդիրներ |
| Ընդգծել նկարի կենտրոնը, ընդգծելու եղանակները՝ կոմպոզիցիայի կարևոր մասերի չափերի մեծացում կամ փոքրացում, կենտրոնի ընդգծում լույսի և գույնի միջոցով, գլխավոր հակադրումը երկրորդականին: |
| Վերջնարդյունքներ |
| • Կծանոթանան հայկական մանրանկարչության հետ:<br>• Կկարողանան արտանկարել արվեստագետների աշխատանքները և կստեղծեն սեփական աշխատանքները: |
| Բովանդակություն |
| 1. Մանրանկարչություն: (2 ժամ)<br>2. Ստեղծել սեփական մանրանկարը: (1 ժամ) |

| Հագուստի մոդելավորում ( 8 ժամ ) |
|---|
| Նպատակը |
| Ծանոթացնել հագուստի մոդելավորման պատմությանը: Տարբեր ոճերի հագուստների մոդելավորում: |
| Խնդիրներ |
| Կիմանա հագուստի մասին, կտարբերի ոճերը և կստեղծի սեփական հագուստները: |
| Վերջնարդյունքներ |
| • Կիմանա նորաձևության ոճերն ու ուղղությունները::<br>• Մոդելավորման գործընթացը<br>• Կնկարեն և կստեղծեն սեփական հագուստների հավաքածուն: |
| Բովանդակություն |
| 1. Հաըկական տարազ: (3 ժամ)<br>2. Ստեղծել տարբեր ոճի հագուստներ: (2 ժամ)<br>3. Ծանոթաթանալ այլ երկրների հագուստների հետ և ստեղծել սեփականը: (3 ժամ) |